ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ին/

19.09.2025թ

«ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայրի վարչական տարածքում կլինկերի, բետոնի և խճի արտադրություն աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

2025թ. սեպտեմբերի 15-ին ժամը 11:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /ընդունված 23.05.2023թ ՀՕ-150-Ն/ և ՀՀ կառավարության 28.12.2023թ N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Նորավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-ի կողմից Սիսիան համայնքի Նորավանի կենտրոնական փողոց, 6/1 հողամաս հասցեում ձեռնարկվող կլինկերի, բետոնի և խճի արտադրություն վերաբերյալ /1-ին / հանրային լսումը:

Հանրային քննարկումներին մասնակցում էին «ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-Ի տնօրենի կողմից լիազորված՝ Է. Աբրահամայնը, կազմակերպության կողմից հրավիրված «ՔՈՆՍԵԿՈԱՐԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Վռամ Թևոսյանը, Արմեն Ղլիջյանը, Սիսիան համայնքի Նորավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռոման Բաղդագյուլյանը, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արմեն Խաչատրյանը, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ՝ Հայկ Քարամյանը, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի բնակիչները:

Բացման խոսքով հանդես եկավ ՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արմեն Խաչատրյանը նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումը: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է:

Ելույթ ունեցան՝

«ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-Ի փաստաթղթավորման, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության>>, հաշվետվության կազմման և փորձաքննության հարցերով զբաղվող՝ Վռամ Թևոսյանը ներկայացրեց ՀՀ օրենսդրությունը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջները և արտադրության մեջ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը: Բոլոր տեղամասերը կահավորված են լինելու փոշեորսիչ համակարգերով: Հեռավորությունը

արտադրական տարածքից մինչև մոտակա բնակելի տունը կազմում է 400մ, որը նորմերի մեջ է: Նախատեսվում է արտադրամասի ամբողջ երկայնքով ծառածածկ պաշտպանիչ շերտ հիմնել:

Հարց հնչեց՝ Կապված փոշու, կեղտի, աղմուկ լինելու, բնակիչներին անհանգստություն պատճառելու մասին: Հնչեցին հարցեր կապված սոցիալական ծրագրերի, աշխատատեղերի վերաբերյալ: Ընկերությունը հավաստեց, որ համայնքի հետ կքննարկվեն և կնախատեսվեն սոցիալական ծրագրեր, ինչպես նաև աշխատողները հնարավորինս կլինեն մոտակա բնակավայրից:

Սիսիան համայնքի բնակիչներ՝ Ջուլիետա Մուրադյանը, Նախշուն Յազուլյանը և ևս 1 բնակիչ դեմ էին բետոնի և խճի արտադրությանը: Պատճառաբանելով, որ փոշին, կեղտը և ձայնը խանգարելու են բնակիչների բնականոն կյանքին և առողջությանը, իսկ բնակիչներ՝ Բ.Ամիրջանյանը, Վ.Արզումանյանը և Զ.Ամիրջանյանը հատուկ շեշտեցին, որ սույն գործունեությունը ունի նաև լուրջ սոցիալական նշանակություն բնակավայրի աշխատանքային ռեսուրսները, հատկապես երիտասարդությանը, տեղում պահելու համար:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցներից ոմանք դեմ էին, իսկ մեծամասնությունը կողմ էր, որպեսզի «ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-Ի կողմից նախատեսվող ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան Համայնքի Նորավան բնակավայրի վարչական տարածքում կլինկեր, բետոնի և խճի արտադրության կազմակերպմանը:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 2 թերթ:

Քննարկումների պատասխանատու և վարող՝

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արմեն Խաչատրյան

Ձեռնարկող՝

«ԷՐ-ԸՆԴ-ԱՐԵԳ» ՍՊԸ-Ի կողմից լիազորված՝ Էրիկ Աբրահամյան

Արձանագրող՝ Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ՝

Հայկ Քարամյան